Թորդում լճակը հարաւ-արեւմուտքից հիւսիս-արեւելք ձգուում է մօտ 12 կիլոմետր երկարութեամբ եւ 1—1·20 կիլոմետր լայնութեամբ, ունի տեղ-տեղ մինչեւ 100 մետր խորութիւն: Լճակը սեղմուած է կարծր ապառաժներով, աջ կողմից Թէյլուն եւ ձախ կողմից Մազնուր կամ Վանուց անտառապատ եւ մացառապատ լեռներով: Աջ կողմից լիճը թափուում են աննշան առուներ, իսկ ձախ-կողմից Խարսի կամ Կարսի, Խիկի առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերը եւ նրանց հանդերը: Այս լճակի տակ, ասում են, գտնուում է աւերակ ամրոցներ ու բերդեր-Անի բերդ, որոնք 1791ին մնացել են ջրերի տակ թաղուած:

Ականատեսները իրենց սերնդին պատմել են, որ 1791ին մի սոսկալի երկրաշարժից Կարս գեղի Խարս լերան վերին կատարը կործանուել եւ լցուել է Թորդում վտակի հունը. ձորն ամբողջապէս ծածկել է, ջրի ընթացքը կապել: Այս լիցքը այնպէս է պնդել գետի հունն ու նրա ձորը, որ ջրերի ընթացքը խափանել է եւ ջուրը 12 վերստ երկարութեամբ բարձրացել ու լճացել է, տեղ-տեղ մինչեւ 100 մետր խորութեամբ: Ապա ջուրը այսքան բարձրանալուց յետոյ, մօտակայ մի բարձր ժայռերից թափուում է իր Թեւ կամ Դեւ առուակը, որի հետ երկու կիլոմետր ճանապարհ առաջ գնալով մտնում է նախկին հունը: Թորդում լճի բարձունքից այս